

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ. հուլիսի 2-ի նիստի

1. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ դեկան, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան):
2. Իրավագիտության ֆակուլտետի 2012-2013 ուս. տարվա ԳՀԱ հաշվետվության և 2013-2014 ուս. տարվա ԳՀԱ ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար, դոցենտ Տ. Դավթյան, դեկանի տեղակալ, պրոֆեսոր Ա. Հայկյանց):
3. Ուսանողական խորհրդի նախագահի տարեկան հաղորդումը կատարված աշխատանքների մասին (զեկ. ուսխորհրդի նախագահ՝ Ս. Վարդանյան):
4. Իրավակիրառ պրակտիկայի հաստատություններից ստացված իրավական խնդիրների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին (ամբիոնների վարիչներ):
5. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:
6. 2012-2013 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):
7. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ դեկան, պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ռ. Եղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի 80-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի հաստատման մասին դեկանի հաղորդումն ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի 2012-2013 ուս. տարվա ԳՀԱ հաշվետվության և 2013-2014 ուս. տարվա ԳՀԱ ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ գիտքարտուղար, դոցենտ Տ. Դավթյան, դեկանի տեղակալ, պրոֆեսոր Ա. Հայկյանց):

Տ. Դավթյանն ըստ ամբիոնների ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ տվյալները: Ամփոփ ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2012-2013 ուս. տարվա ԳՀԱ հաշվետվություն

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԱՔՆԵՐԻ ՁԵԿԸ	Քրեական իրավունքի ամբիոն	Քաղաքացիական իրավունքի ամբիոն	Սահմանադրական իրավունքի ամբիոն	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն	Քաղաքացիական դատավարության ամբիոն	Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն	Եվրոպական և միջազգային	ԸՆԴՈՒՄՆԸ
Դասագրքեր (ընդամենը)	2/2	1/2	1/0	1/0	1/0	0/0	1/0	7/4

ա/ նոր	0/0	1/1	0/0	1/-	1/-	0/0	1/0	4/1
բ/ վերահրատարակում	2/2	0/1	1/-		-	-	-	3/3
Ուսումնական ձեռնարկներ	1/1	0/0	1/1	-/3	2/-	0/0	0/0	4/5
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	1/0	1/0	0/0	0/0	0/0	0/1	0/0	2/1
Մենագրություններ	0/0	1/0	1/0	0/0	0/1	2/4	1/3	5/8
Ատենախոսութ. կատարում և պաշտպանություն (ընդամենը)	2/3	2/4	2/2	0/0	1/1	1/1	5/1	13/12
ա/ թեմածուական	2/3	2/4	2/2	0/0	1/1	1/0	4/0	12/10
բ/ դոկտորական	0/0	0/0	0/0	0/0	0/0	0/1	1/1	1/2
Գիտական հրատարակումներ, այդ թվում հոդվածներ	3/5	8/16	11/20	10/13	10/16	8/10	14/6	64/86

Ասվածն ամփոփելով՝ կարելի է եզրահանգել, որ բոլոր ամբիոններն էլ հիմնականում կատարել են նվազագույն բավարարը, թերացումներ ինչպես տեսանք եղել են կամ եթե ամբիոնում կատարվել է չճիշտագրված աշխատանք, ապա դա ըստ էության լրացրել է մեկ այլ ծրագրված, բայց չկատարված աշխատանք: Բացի այդ, դարձյալ նկատվում է, որ ամբիոնները աշխատում են քիչ նախատեսել, հետո գերազանցել նախատեսածը, քան հակառակը: Եվս մեկ հանգամանք, որը նախորդ տարիներին էլ նկատվում էր դա ԳՀԱ անհամաչափ կատարումն է ամբիոնների անդամների կողմից: Երբեմն ամբիոնները իրենց կատարողականն ապահովում են մեկ-երկու անդամների գիտական ակտիվության հաշվին, ինչը նույնպես ընդունելի չէ:

Ահա այս ուղղությամբ պետք է քայլեր ձեռնարկվեն:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2012-13 ուս. տարվա ԳՀԱ ծրագիրը: Ամփոփ ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2013-14 ուս. տարվա ԳՀԱ ծրագիր

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԱՔՆԵՐԻ ԶԵԿԸ	Քրեական իրավունքի ամբիոն	Քաղաքացիական իրավունքի ամբիոն	Սահմանադրական իրավունքի ամբիոն	Քրեական դատավարության և կրիմինալիստիայայի ամբիոն	Քաղաքացիական դատավարության ամբիոն	Պետության և դատախազության իրավունքի տեսության ու պատմության ամբիոն	Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն	ԸՆԴՈՒՄԵՆԸ
Դասագրքեր (ընդամենը)	2	2	1	2	1	0	0	6
ա/ նոր	0	1	0	1	1	0	0	2
բ/ վերահրատարակում	2	1	1	1	0	0	0	4
Ուսումնական ձեռնարկներ	1	0	1	1	2	2	1	8

Ուսումնամեթոդական ձեռնարկներ	1	1	0	1	1	1	0	5
Մենագրություններ	0	1	2	2	1	1	1	7
Ատենախոսութ. կատարում և պաշտպանություն (ընդամենը)	2	2	2	1	4	0	7	16
ա/ թեմածուական	2	1	2	0	4	0	6	13
բ/ դոկտորական	0	1	0	1	0	0	1	3
Գիտական հրատարակումներ, այդ թվում հոդվածներ	3	15	15	10	8	15	12	80

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2012-2013 ուս տարվա ԳՀԱ հաշվետվություններն ընդունել ի գիտություն,

բ/ հաստատել իրավագիտության ֆակուլտետի 2013-2014 ուս տարվա ԳՀԱ ծրագիրը,

գ/ հանձնարարել ամբիոններին՝ գործուն քայլեր ձեռնարկել 2013-2014 ուս տարվա ԳՀԱ ներկայացրած ծրագրերի իրականացման ուղղությամբ, միաժամանակ, գիտահետազոտական հետագա աշխատանքների ծրագրումն իրականացնել առաջին հերթին ամբիոնի առարկաները ուսումնական և ուսումնասովորական գրականությամբ ապահովելու չափանիշից ելնելով:

3. ԼՄԵՑԻՆ. Ուսանողական խորհրդի նախագահի տարեկան հաղորդումը կատարված աշխատանքների մասին (զեկ. ուսխորհրդի նախագահ՝ Ս. Վարդանյան):

Հաղորդումը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կատարված աշխատանքների մասին ուսանողական խորհրդի նախագահի տարեկան հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՄԵՑԻՆ. Իրավակիրառ պրակտիկայի հաստատություններից ստացված իրավական խնդիրների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին (ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կատարված աշխատանքների մասին ամբիոնների վարիչների հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. Ուսումնական-առարկայական ծրագրերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մեթոդխորհրդի նախագահ Աննա Մարգարյանը հայտնեց, որ բոլոր ամբիոններից էլ ստացվել են առարկայական ծրագրերը, սակայն թերություններով հանդերձ վերադարձվել են վերախմբագրման և ամբիոնները պարտավորվել են մինչև նոր ուսումնական տարեսկիզբ ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել ամբիոններին հետևողական լինել ուսումնական-առարկայան ծրագրերը սահմանված չափանիշներին համապատասխան և սահմանված ժամանակին ներկայացնելու համար:

6. 2012-2013 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

ԼՄԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը ներկայացրեց 2012-2013 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ըստ հաշվետվության՝ կուրսերի առաջադիմության ցուցանիշները հետևյալն են.

Առաջին կուրսում /151 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 46 տոկոս: Երկրորդ կուրսում /72 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 33 տոկոս: Երրորդ կուրսի /99 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 42 տոկոս: Մագիստրատուրայի առաջին կուրսում /56 ուսանող/ ընդհանուր առաջադիմությունը կազմել է 96 տոկոս: Միջին առաջադիմությունն ըստ առանձին մասնագիտացումների կազմել է 40 տոկոս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2012-13 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն :

7.1. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դասախոս Վիկտորիա Օհանյանի «Իրավունքի աղբյուրների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում/ տեսագործական վերլուծություն» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության :

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան